

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

2.12.2004թ. [համառոտ հաշվետվություն, հատվածներ]

Դեկտեմբերի 3-ը հաշմանդամների միջազգային օրն է: Այս կապակցությամբ Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը նոյեմբերի 25-30-ին իրականացրել է հարցում Երեւանի բնակիչների շրջանում: Հարցվել են 18 եւ ավելի տարիքի 646 երեւանցիներ: Հարցումը հեռախոսային էր:

Հարցվողներին առաջարկված «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ» հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

Այո, ստեղծված են բոլոր պայմանները	3%
Այո, ստեղծվել են որոշ պայմաններ	22%
Ոչ, պայմաններ ստեղծված չեն	68%
Դժվարանում եմ պատասխանել	7%

